ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1 ☎ /0322/ 4-61-92

թիվ _____
« ___» _____ 2024 թ.

HETQ.am-ի լրագրող
ԱՆՅԱ ՍԱՐԿԻՍՈՎԱՅԻՆ
էլ. փոստ՝ annya.sarkisova@gmail.com

Ձեր 03.06.2024թ. էլեկտրոնային հարցմանը.

Հարգելի տիկին Սարկիսովա

Ձեզ եմ տրամադրում ՀՀ Լոռու մարզում ապաստանած Արցախից բռնի տեղահանված քաղաքացիների վերաբերյալ Ձեր կողմից ակնկալված տեղեկատվությունը:

1. ՀՀ Լոռու մարզում բնակվում է բռնի տեղահանված 1615 ընտանիք, 5933 անձ:
2. Արցախից բռնի տեղահանվածները բնակվում են մարզի թվով 9՝ Վանաձոր, Փամբակ, Սպիտակ, Ստեփանավան, Գյուլագարակ, Լոռի Բերդ, Ալավերդի, Թումանյան Տաշիր համայնքներում:

3. Նրանցից քանի՞սն են գտել աշխատանք:
   ՀՀ Լոռու մարզում աշխատանք են գտել 418 արցախցիներ:
   Արցախցիները աշխատում են տարբեր կազմակերպություններում՝ համայնքապետարանում, դպրոցներում, բուժհաստատություններում, մասնավոր հատվածում, անտառտնտեսությունում (սեզոնային), ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ սկսել են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ և այլն:

4. Ընտանիքներից քանի՞սն են համարվում սոցիալապես անապահով:
   Արցախից բռնի տեղահանված ընտանիքները ընդհանուր առմամբ ինչպես կայքի, ունեցվածքի առումով, այնպես էլ սննդային ապահովվածությամբ՝ բավարարում չունեն: Նրանց մեծ մասը բնակվում են վարձակալած բնակարաններում կամ տներում, որոնց փոխհատուցումը կատարում է պետությունը: Ընտանիքների մեծ մասը անապահով կարելի է համարել, թեև անապահովությունը փաստող համակարգը մեր երկրում վարում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը /«Նպաստ» համակարգ/, սակայն այդ համակարգում ընդգրկվելու համար մեծաթիվ ընտանիքներ տարաբնույթ խնդիրներ են ունենում և չեն կարողանում հաշվառվել կամ հաշվառվելուց հետո ձեռք են բերում նպաստառության շեմից ցածր միավոր:

կատ. Ռ.Պողոսյան
հեռ. /0322/ 2-33-99

5. Քանի՞ բնակիչ ունի հաշմանդամության կարգ:
   Հաշմանդամություն ունեն 468 մարդ:

6. Քանի՞սն են մարզ տեղափոխվելուց հետո արտագաղթել:
   Պարբերաբար տեղի է ունենում ներքին միգրացիա, համայնքից դեպի այլ համայնքներ և ընդհակառակը: Ընդհանուր արտագաղթել է 395 ընտանիք:

7. Արդյո՞ք բոլոր տեղահանվածների երեխաները կարողացել են ընդունվել դպրոց, մանկապարտեզ:
   ՀՀ Լոռու մարզի ոչ մի համայնքում բռնի տեղահանված ընտանիքների երեխաները դպրոց կամ մանկապարտեզ ընդունվելու հետ կապված որևէ խնդրի առջև չեն հայտնվել:

10/06/2024

X

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

կատ. Ռ.Պողոսյան
հեռ. /0322/ 2-33-99